Նա ասաց, թէ իր հայրը գնել էր այդ հողը մի քուրդ բէկի այրի կնոջից, որը փողի սաստիկ կարօտութեան մէջ լինելով, ստիպուեցաւ վաճառել իր կալուածքը, եւ իբրեւ իրանց սեփականութեան, նա ազատ էր աղայական տուրքերից: Իմ կարծիքին, թէ լաւ կը լինէր, որ ամէն գիւղացի իր սեփական հողն ունենար, Յասոն պատասխանեց — լաւ կը լինէր, եթէ թողնէին... եւ աւելացրուց, — թէ գիւղացիք փող չունեն հող գնելու համար, եւ եթէ գնէին եւս, աղաները նրանց հետ թշնամանում են, սկսում են նեղացնել, կամ ջուր չեն տալիս, կամ սովորացնում են իրանց մարդիկներին նրանց ցանքերը փչացնում են, կալը կամ հունձի դէզերը հրդեհում են, վերջապէս, ամէն միջոցներ գործ են դնում, որ գիւղացին չվստահանայ կալուածատէր լինելու, այլ միշտ մնայ այն կարծիքի մէջ, թէ ինքը առանց աղայի օգնութեան, առանց նորա հովանաւորութիւն, որեւիցէ միջոցով ապրուստ ճարել կարող չէ:

— Քո բարի աչքերով տեսնում ես, — շարունակեց նա, — հորես գօտկումս խրած եմ մի ջուխտ թափանչայ. այնտեղ լծան վրայ կապած է թոանքը. ինչո՞ւ համար են դրանք. ես այստեղ վար եմ վարում. ո՞ւմ հետ կռիւ ունեմ, բայց էլի հարկաւոր են. թշնամին ամէն ժամ մեր վզի ետեւեն կանգնած է: Մէկ էլ տեսար, երկու քրդի ձիաւոր մզրախները ձեռներին, լո-լո՛՛ կանչելով, ձորի մէջեն դուրս եկան, եզները կ'արձակեն եւ կը տանեն. աչքերդ բաց-բաց պէտք է կանգնես եւ մտիկ տաս. շատ-շատ կը սկսես քո գլուխը թակել, որ տարան սիրուն եզներդ, էգուց արօրը վարող չես ունենա...: Բայց քանի սրանք իմ մօտ են, — նա ձեռքը դրեց ատրճանակների վրայ, — ինքը սատանան չի կարայ մօտենալ Հասօի եզներին...

— Միեւնոյնը կարող է պատահել եւ այն մշակների հետ, որոնք վարում են աղայի արտերը:

— Չէ, աղաներն իրանք են թալանում իրանց բանոորներին, բայց թող չեն տալիս ուրիշները մօտենան իրանց խոնարհ ծառաներին: Ամէն գազան իր որսը պահպանում է մէկել գազաններից:

— Այդ միեւնոյն է, թէ իրանք եւ թէ օտարները, երկու դէպքում եւս մշակը կողոպտւում է:

— Միեւնոյնը չէ: Դու խօ գիտես այն հաւի առակը, որ ամէն օր մի-մի ոսկի հաւկիթ էր ածում իր տիրոջ համար: Մշակը մի այնպիսի հաւ է աղայի համար, աղան մէկ անգամից չէ սպանում հաւին (մշակին), որ նրա փորից խազինայ (գանձ) դուրս բերէ. նա թողնում է, որ նա ապրէ, որ ոսկի հաւկիթը շարունակ ստանայ: Բայց աւազակները նրա կեանքին չեն ափսոսում, ուզում են մէկ անգամից հարստանալ եւ սպանում են...